

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ ՀԱՌԻ ՅՈԲԻԼՅԱՐԸ

ԱՍՄԱՑՈՐԴ ՆՎԻՌՈՒՄ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ
(Ակադեմիկոս Աշոտ Աղասու Մելքոնյանի
ծննդյան 60-ամյակի առթիվ)

Ակադեմիկոս Աշոտ Աղասու Մելքոնյանի կյանքն անխպելիորեն կապված է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և պատմության ինստիտուտի հետ, ուր սկսելով աշխատել՝ տարիների ընթացքում հասել է տնօրենի պատասխանատու պաշտոնին: Ա. Մելքոնյանի գործն անմնացորդ նվիրում է հարազատ ժողովրդի պատմության յուսաբանմանը, պատմագիտությանը և ընդհանրապես հայագիտության զարգացմանը: Հանրապետության հասարակայնությունը և Սփյուռքը նրան ճանաչում են որպես ականավոր գիտնականի, գիտության և կրթության ոլորտի փորձառու մասնագետի, ուղղամիտ մարդու և խիսկան քաղաքացու:

Աշոտ Մելքոնյանը պատկանում է այն գործիչների թվին, ովքեր բնարելով իրենց մասնագիտությունը, գիտական գործունեության ամբողջ ընթացքում, տասնամյակների անխոնջ աշխատանքով ծանրակից ներդրում են ունեցել գիտության զարգացման գործում և դրանով իսկ խոշոր ծառայություն մատուցել հայագիտությանը, հետևապես՝ Հայրենիքին:

Ա. Մելքոնյանի և պատմության ինստիտուտի աշխատակազմի անդույնագերով կյանքի կոչվեց արտակարգ պատասխանատու ու արժեքավոր այնպիսի գործ, ինչպիսին «Հայոց պատմություն» ակադեմիական նոր բազմահատորյակի հրատարակությունն է:

Լայնահուն է ակադեմիկոս Ա. Մելքոնյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը, այն ընդգրկում է Արևմտյան Հայաստանը, Հայկական Հարցը, Հայոց ցեղասպանությունը, Զավախիքի պատմությունը, Հայ-վրացական հարաբերությունները, պատմական ժողովրդագրության հիմնահարցերը, Հայոց պետականության պատմությունը և այլն: Ա. Մելքոնյանը գիտաքաղաքական կարևորագույն նշանակություն ունեցող Հայաստանի նահանգների վարչատարածքային և ժողովրդագրական գործընթացների ուսումնափրության նախաձեռնողներից է: Նրա ղեկավարությամբ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործել է թեմատիկ խումբ: Նրա ուղղորդմամբ էլ այդ ուղղությամբ աշխատանքները յայն ծավալ ընդունեցին՝ ընդգրկելով արդի գիտական շրջանառության մեջ:

Ակադեմիկոս Ա. Մելքոնյանը 18 գրքի և 450-ից ավելի գիտական հոդվածների հեղինակ է: Նրա գիտական խմբագրությամբ լույս են տեսել տասնյակ աշխատություններ, ժողովածուներ, գալուստական գասագրքեր և բուհական ձեռնարկներ: Բազմիցս մասնակցել է Հանրապետական և միջազգային գիտական հեղինակավոր խորհրդաժողովների, 4 տասնյակից ավելի երկրնե-

րում հանդես է եկել ելույթներով և դասախոսություններով, ինչի շնորհիվ մեծ ճանաչում է ստացել ոչ միայն հայության, այլև արտասահմանի մասնագետ-պատմաբանների շրջանում:

Հայրենի երկրի և արմատների հանդեպ պաշտամունքի հասնող Աշոտ Մելքոնյանի սերն էլ հենց պայմանավորել են մասնագիտական բնագավառում նրա խորությունը: Դրա վառ ապացույցը հայրենի երգումին և Զավախքին նվիրված բազում հոդվածներն ու գրքերն են: Գիտական հասարակայնությունը հետաքրքրությամբ և արժելորումով ընդունեց «Երգում. Երգումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին» (այս գիրքը և Արևմտյան Հայաստանի գավառներին ու բնակավայրերին նվիրված Ա. Մելքոնյանի մոտ 30 հոդվածներն արժանացել են «Հայաստան» համահայկական հիմնադրամի գլխավոր մրցանակին՝ «Երիտասարդ գիտնական-94» անվանակարգով) և «Զավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» (արժանացել է «Գուրգեն Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» հիմնադրամի դրամաշնորհին և Թեքեյան մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» մրցանակին) մենագրությունները: Ընդգծենք, որ այդ գրքերը յուրահասուլ նշանակություն ունեցան վարչատարածքային և ժողովրդագրական գործընթացների ուսումնասիրության մեթոդաբանության մշակման հարցում: Պատմական ժողովրդագրությունն Աշոտ Մելքոնյանի տարերքն է, ուսումնասիրության հիմնաքարը, և այդ ասպարեզում ոչ մի մասնագետ անտարբեր չի կարող անցնել նրա աշխատությունների կողքով:

Աշոտ Մելքոնյանը բեղմնավոր գործունեություն է ծավալում իբրև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն: Նրա շնորհիվ սոցիալ-տնտեսական աննպաստ պայմաններում հնարավոր եղավ պահպանել ինստիտուտի գիտական ներուժը, ստեղծել աշխատանքային բարենպաստ միջավայր: Զգալի է նաև նրա ներդրումը գիտական երիտասարդ կազմերի պատրաստման ասպարեզում: Նրա զեկավարությամբ պաշտպանվել է 14 թեկնածուական ատենախոսություն, որոնք նվիրված են եղել Հայաստանի պատմական ժողովրդագրության, ցեղասպանության և այլ թեմաներին:

Աշոտ Մելքոնյանը գիխավորում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական և պատմության ինստիտուտում գործող 004 Հայոց պատմության մասնագիտական խորհուրդները, անդամակցում է ԵՊՀ-ի, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի, Երևան քաղաքի պատմության թանգարանի գիտական խորհուրդներին, հանդիսանում է նաև մի շարք գիտական հանդեսների՝ «Հայոց պատմության հարցեր» (խմբագիր), «Պատմաբանասիրական հանդես» (խմբագրական խորհրդի նախագահ), «Լրաբեր հասարակական գիտությունների», «Բանբեր հայագիտության», «Վէմ», «Կանթեղ», «Բանբեր Հայաստանի արխիվների», «Վետնիկ համապատասխան պատմական կազմերի անդամ»:

Ա. Մելքոնյանի զեկավարության տարիներին ինստիտուտն արձանագրել է լուրջ ձեռքբերումներ. ակտիվացրել գործակցությունն ինչպես Սփյուռքի մեր հայրենակիցների, այնպես էլ արտասահմանյան գիտական շրջանակների հետ:

Ողջունելի և օրինակելի է գիտությունը հասարակական-քաղաքական գործունեությանը շաղկապելու նրա մեծ հմտությունը։ Գիտությանը զուգահեռ, Ա. Մելքոնյանը մտահոգված է մեր երկրի հոգսերով, իրականացրել և իրականացնում է հասարակական-քաղաքական արդյունավետ գործունեություն։

Գնահատելի է Ա. Մելքոնյանի նախաձեռնությունը Մուղնիի դալրոցն անվանի Հոգևորական Մեսրոպ արք. Աշճյանի անվամբ կոչելու և Արքագանի արձանը տեղադրելու գործում։ Նրա շնորհիվ ինստիտուտում հիմնվեցին Մեսրոպ արք. Աշճյան կենտրոնը, գրադարանը, նաև տպարանը, ուր «Մեսրոպ արք. Աշճյան մատենաշարում» տպագրվում են ինստիտուտի գիտաշխատողների աշխատությունները։

Վաստակաշատ գործիչը Հայրենիքում և Սփյուռքում վաղուց ճանաչում է ձեռք բերել ոչ միայն որպես նշանավոր պատմաբան, լրջախոհ գիտնական, գիտության բանիքուն կազմակերպիչ, այլև ազնիվ քաղաքացի, մեր ժողովրդի ու հանրապետության հոգսերին մշտապես ականջալուր հայ մարդ։

Մեր հանրապետության քաղաքացիները քաջածանոթ են նաև հայթուրքական հարաբերությունների և նախաստորագրված արձանագրությունների վերաբերյալ նրա դիրքորոշմանը։ Քաղաքացիական արիության ու սեփական հավատամքին անդավաճան մնալու վառ օրինակ է ՀՀ Ազգային ժողովում «Նախաստորագրված արձանագրությունները և Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացը» թեմայով խորհրդարանական լսումներին նրա ելույթը։

Ա. Մելքոնյանի նկարագրին բնորոշ հատկանիշներից են ազնվությունը, շխտակությունը, սկզբունքայնությունը։ Հայրենասիրության յուրահատուկ դրսեղումներ են 1997 թվականից նրա ուխտագնացություններն Արևմտյան Հայաստան և Կիլիկիա, որոնք վարակիչ եղան շատերի համար։ Ուխտագնացությունների գագաթնակետը հանդիսացավ նրա վերելքը «Հայոց անմահության խորհուրդ» Սուրբ Արարատ լեռը։

Անհնարին է շրջանցել ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի գործունեության մեջ այնպիսի մի կարևոր բնագավառ, որպիսին կրթական կյանքում նրա ունեցած մեծ ավանդն է։ Նրա ղեկավարությամբ ծնվեցին դալրոցական նոր դասագրքեր, որոնցում Հայոց պատմության շատ վիճահարույց խնդիրներ ստացան իրենց Հայեցակարգային լուծումները։ Տասնամյակներ շարունակ դասավանդելով ԳԱԱ մագիստրատուրայում, Միխիթար Հերացու անվան բժշկական (2004–2006 թթ. Համատեղության կարգով հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ), Երևանի պետական համալսարանում և Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում՝ Ա. Մելքոնյանը զգալի նպաստ բերեց երիտասարդությանը կրթելու, հայրենասիրական ոգով դաստիարակելու այնքան անհրաժեշտ գործին։

2010 թ. ՀՀ պաշտպանության նախարարին կից հասարակական խորհրդի նախաձեռնած «Պատմության և մշակույթի էջեր» ծրագրի շրջանակներում հանրապետության այլ գիտնականների, մտավորականների հետ նա հայրենասիրական դասախոսություններ է կարդացել Հայոց բանակում՝ նպաստելով անձնակազմի ուղմահայրենասիրական ոգու բարձրացմանը։

Հստա արժանվույն է գնահատվել մեր թանկագին հոբելյարի վաստակը: Նա Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս է, Հանրաճանաչ՝ Հայրենական և արտերկրի Հայագիտական շրջաններում, Հայրենիքում և Սփյուռքում՝ նաև իր հասարակական-քաղաքական անդադրում գործունեությամբ: Նա պարգևատրվել է բազմաթիվ մրցանակներով, Հայաստանի և Արցախի հանրապետությունների կառավարական բարձր պարգևներով, ի թիվս որոնց՝ Երևանի բժշկական համալսարանի «Ոսկե» (2005 թ.), «Ակսել Բակունց» (2011 թ.), «Ֆրիտյոֆ Նանսեն» ոսկե (2010 թ.), ԵՊՀ-ի ոսկե (2011 թ.), «Մանկավարժական համալսարան» ոսկե (2011 թ.), ՀՀ ՊՆ «Գարեգին Նժդեհ» (2011 թ.), ՀՀ ՊՆ «Անդրանիկ Օզանյան» (2013 թ.), «ԼՂՀ ազգային-ազատագրական պարքարի 25-ամյակի առօժիկ» (2013 թ.), «Արդիշտի Առաջին» (2015 թ.), «Վաչագան Բարեպաշտ» (2018 թ.) հուշամեդալներով և մեդալներով: Պատմագիտության բնագավառում ձեռք բերած ակնառու հաջողությունների համար Ա. Մելքոնյանին շնորհվել է «Մովսես Խորենացի» (2003 թ.), Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի միջոցառումներին ակտիվորեն մասնակցելու համար՝ ՀՀ վարչապետի (2005 թ.) մեդալները:

Սիրելի Աշոտ Աղասու

Զերմորեն շնորհավորում ենք Ձեզ՝ ծննդյան 60-ամյա հոբելյանի առիթով, մաղթում երկար տարիների կյանք, քաջառողջություն, արևշատություն, երջանկություն, իղձերի իրականացում, գիտամանկավարժական ու հասարակական հետազա արգասարեր գործունեություն, անսպառ եռանդու բեղուն գրիչ՝ ի փառս հայրենական գիտության զարգացման, հայրենիքսիությունը գիտակրթական կապերի հետազա սերտածման, անմնացորդ նվիրում մեր ժողովրդին ու Հայրենիքին:

ՀՀ ԳԱԱ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ,
ՀՀ ԳԱԱ. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

«Գիտություն», փետրվար, № 2, 2021 թ.

Խմբագրության կողմից

Հանդեսի խմբագրական խորհրդի հետ ի սրտե շնորհավորում ենք անվանի գիտնականին, նրան մաղթում քաջառողջություն և գիտավարչական ասպարեզում նորանոր ձեռքբերումներ, բազմաթիվ աշխատություններ՝ ի մարմնավորումն իր գիտական անսպառ մտահղացումների ու երիտասարդական եռանդի: